# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 875Ա

12 հունիսի 2026թ. ք. Էջմիածին

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 2023SAGLMS և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 27.08.2026թ. կազմված հատակագիծը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Պատկանյան փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0136հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 11.2քմ /11.2քմ արտաքին և 8.9քմ ներքին/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Պատկանյան փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0136հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 11.2քմ /11.2քմ արտաքին և 8.9քմ ներքին/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Պատկանյան փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0136հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Խաչատուր Ռազմիկի Գաբրիելյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԽԻԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 876Ա

12 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

### ԳՈՒՅՔԸ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ (ԲԱԺԱՆԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ հոդվածով, 197-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Եսայան 51 տան հասցեի բնակիչ Նարինե Ստյոպայի Կարապետյանի 23.03.2026թ. դիմումը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 14.05.2026թ. թիվ 7 նիստի թիվ 4 արձանագրությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Նարինե Ստյոպայի Կարապետյանին /ծնված՝ 12.04.1977թ., անձնագիր՝ AT0401600/ տնօրինելու (բաժանելու) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իր անչափահաս երեխա՝ Ալեքս Վազգենի Օհանջանյանին /ծնված՝ 25.09.2018թ., ծննդյան վկայական՝ ԲԱ031400/ պատկանող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի 63/1 հասցեի բնակելի տունը /կադաստրային ծածկագիրը՝ 04-002-0908-0112/, / 1/5 բաժնեմասով/:
2. Հսկողություն սահմանել Ալեքս Վազգենի Օհանջանյանի ծնող Նարինե Ստյոպայի Կարապետյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 877-Ա

ք.Էջմիածին

15 հունիսի 2026թ.

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Երևան քաղաքի Եղբայրության փողոցի թիվ 13 շենքի թիվ 28 բնակարանի բնակիչ Հովհաննես Արմենակի Հովհաննիսյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 02062026-04-0099 տրված՝ 21.11.2023թ., «Հարություն Բեկլույան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 386/ կողմից 27.05.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04172XUYVZS4, 04172STZSGPU/.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Շահումյան բնակավայրի Ռաֆայել Պատկանյան փողոցի թիվ 7 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի:

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Շահումյան բնակավայր, Ռաֆայել Պատկանյան փողոց, թիվ 7 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Շահումյան բնակավայր, Ռաֆայել Պատկանյան փողոց, թիվ 7/1 հողամաս,

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 878Ա

15 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի զեկուցագիրը հյուրասիրություն ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 40000/ քառասուն հազար/ դրամ փոխանցել Ջատիկ սուպերմարկետ ՍՊԸ-ին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 879-Ա

15 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում առկա են համայնքային ծառայության թափուր պաշտոններ, իսկ դրանց համալրումը անհրաժեշտ է համայնքի լիարժեք աշխատանքային գործունեության համար.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում առկա համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ, ըստ սույն որոշման հավելվածի:
2. Մրցույթների տեխնիկական սպասարկումն իրականացնելու, մրցութային հանձնաժողովի աշխատանքների բնականոն ընթացքը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգով սահմանված այլ դրույթների իրականացումն ապահովելու նպատակով մրցույթների անցկացման պատասխանատու նշանակել աշխատակազմի փաստաթղթաշրջանառության և մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ Դավիթ Լալայանին և համակարգչային աշխատանքների պատասխանատու նույն բաժնի պետի տեղակալի ժ/պ Անի Բաբաջանյանին:
3. Հայտարարությունը հրապարակել համայնքի պաշտոնական համացանցային կայքում, ինչպես նաև հայտարարությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝ http://www.azdarar.am պաշտոնական համացանցային կայքում:
4. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 880-Ա

15 հունիսի 2026 թ. — ք. Էջմիածին

**ԱՍԱՏՈՒՐ ԽԱՉԻԿԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԱԾԱՆ ԳՅՈՒՂԻ ԹԻՎ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 04-053-0026-0006/ ՕՐԵՆՔՈՎ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ՉՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԱՆՑ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԵՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ, ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ (ՔԱՆԴԵԼՈՒ) ՄԱՍԻՆ**

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ Վի 03/26 վարչական գործը՝ Ասատուր Խաչիկի Ավագյանի կողմից Վաղարշապատ համայնքի Ծիածան գյուղի թիվ 5-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հողամասին կից Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 04-053-0026-0006/ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց թույլտվության այլ կառույց /ջերմոց և քարե շինություն/ կառուցելու և Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթելու համար վարչական տույժ նշանակելու և ինքնակամ կառույցները քանդելու վերաբերյալ, **պարզեց որ.**

Ասատուր Խաչիկի Ավագյանը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ծիածան գյուղ, թիվ 3-րդ փողոց, թիվ 33 տուն, անձնագիր՝ AR0473504, տրված 04.10.2017թ. 057-ի կողմից), Վաղարշապատ համայնքի Ծիածան գյուղի թիվ 5-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հողամասին կից Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 04-053-0026-0006/ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց թույլտվության իրականացրել է շինարարական աշխատանքներ՝ կառույցել է ջերմոց և քարե շինություն և նույն տարածքում կատարել է հողամասի ապօրինի զավթում, ինչն ի հայտ է բերել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով և 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրավախախտումների հատկանիշներ:

Վերոհիշյալի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 15.05.2026 թվականին կազմված թիվ 3 արձանագրության, տեղազննության և լուսանկարների հիման վրա 2026 թվականի մայիսի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 154-րդ հոդվածի 3-րդ մասի խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում Ասատուր Խաչիկի Ավագյանի մասնակցությամբ:

***<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>***

1. Վաղարշապատի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 15.05.2026 թվականին կազմված թիվ 3 արձանագրությունը:
2. 15.05.2026 թվականին կատարված տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:
3. 15.05.2026 թվականին և 15.06.2026 թվականին կազմված տեղազննությունները:

4. [illegible] 27.06.2026թ.-ի թիվ ԳՐ 05/26 վարչական [illegible]
թիվ 1 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների կողմից իրավախախտման վայր կատարած այցի ժամանակ պարզվել է, որ Աստուր Խաչիկի Ավագյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող Վաղարշապատ համայնքի Ծիածան գյուղի թիվ 5-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հողամասին կից Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 04-053-0026-0006/ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց թույլտվության կառուցել է ջերմոց և քարե շինություն և ինքնակամ զավթել է Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի մայիսի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի մայիսի 27-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Աստուր Խաչիկի Ավագյանը /հիմք՝ փոստային առաքանի ALO133541678AM/:

Ներկայանալով վարչական վարույթի նիստին Աստուր Խաչիկի Ավագյանը հայտարարեց, մեջբերում 27.05.2026թ.-ի թիվ 1 արձանագրությունից. *«Քարի շինության համար պարտավորվում եմ համայնքի հողի վրա գտնվող մասը քանդել մեկ ամսվա ընթացքում, ազատել համայնքի հողը և այն բերել նախկին տեսքի ջերմոցի մասով գեոդեզիայի արդյունքների հիման վրա ապամոնտաժել համայնքային հողի վրա գտնվող հատվածը, որի ժամկետի վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացնեմ»*:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների կողմից 15.06.2026 թվականին կրկին կատարվել է այց իրավախախտման վայր և կազմվել է տեղազննության արձանագրություն, համաձայն որի՝ Աստուր Խաչիկի Ավագյանը չի վերացրել իրավախախտման հետևանքները, չի ազատել ապօրինի զավթած հողամասը և տարածքը չի բերել նախկին տեսքի, ավելին բանավոր հայտնել է, որ չի պատրաստվում ապամոնտաժել ինքնակամ կառույցները և ազատել համայնքի հողը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Աստուր Խաչիկի Ավագյանի հայտարարությունները գտնում եմ, որ ապացուցված կարելի է համարել այն փաստը, որ Աստուր Խաչիկի Ավագյանի կողմից կատարվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 154-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավախախտումները և վերջինս սույն դեպքում հանդիսանում է իրավախախտման սուբյեկտ:

Ավելին, Վաղարշապատ համայնքի Ծիածան գյուղի թիվ 5-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հողամասին կից Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 04-053-0026-0006 կադաստրային ծածկագրով հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության, կառուցվել են ինքնակամ կառույցներ՝ ջերմոց, քարեն շինություն և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասի վրա առկա ինքնակամ այլ կառույցներ, նշված կառույցները կառուցված են այդ նպատակի համար չհատկացված հողամասում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, ուստի օրենքի ուժով ենթակա է քանդման /ապամոնտաժման/:

**<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.</u>**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի առաջին մասին 1-ին կետի համաձայն՝ պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը

և դրա նախանշանը չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի համաձայն՝ համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք: Համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է: Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի թիվ 1840-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածան գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել է համայնքին և հանդիսանում է համայնքային սեփականություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ինքնակամ զբաղեցված հողամասերը վերադարձվում են դրանց սեփականատերերին, օգտագործողներին՝ առանց հողային օրենսդրություն խախտողների կողմից այդ հողամասերի ապօրինի օգտագործման ժամանակահատվածում կատարված ծախսերի հատուցման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհիսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Ինքնակամ կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

Համաձայն «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի 2-րդ հավելվածի 2.3-րդ մասի «Արմավիրի մարզի համայնքներն ու բնակավայրերը» ցանկի 2-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդվածի 3.4-րդ և 4-րդ մասերի՝ Վաղարշապատ և Խոյ համայնքները միավորվել են և ստեղծվել է նոր Վաղարշապատ համայնք, որը նախկին համայնքների իրավահաջորդն է:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի համաձայն՝ համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք: Համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է: Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը՝ գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Տնօրինման իրավունքը՝ գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

գ) օրենքով նախատեսված ժամկետներում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով չեն հաշվառվել:

Նույն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Վերոգրյալի ներկայացման ներքո, գտնում եմ, որ ապացուցված կարելի է համարել այն փաստը, որ Ասատուր Խաչիկի Ավագյանի կողմից կատարվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով և 154-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավախախտումը և վերջինս սույն դեպքում հանդիսանում է իրավախախտման սուբյեկտ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, վարչական իրավախախտումների մասին օրենսդրության հիմունքներին, նույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Տվյալ դեպքում՝ Ասատուր Խաչիկի Ավագյանը կատարել է թվով 2 /երկու/ վարչական իրավախախտումներ, որոնց համար տույժը պետք է նշանակվի՝ յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասը, 188-րդ հոդվածը, 274-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածը, 116-րդ հոդվածի 2-րդ մասը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասը և 154-րդ հոդվածի 3-րդ մասը, 278-րդ, 279-րդ և 281-րդ հոդվածները, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետը, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման պահանջները՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ասատուր Խաչիկի Ավագյան նկատմամբ նշանակել տուգանք՝

1) Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու համար **200 000 /երկու հարյուր հազար/** ՀՀ դրամի չափով,

2) Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 04-053-0026-0006/ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց թույլտվության այլ կառույց /ջերմոց և քարե շինություն/ կառուցելու համար **2 000 000 /երկու միլիոն/** ՀՀ դրամի չափով,

ընդհանուր՝ **2200 000 /երկու միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:**

2. Չօրինականացնել Վաղարշապատ համայնքի Ծիածան գյուղի թիվ 5-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հողամասին կից /կադաստրային ծածկագիր՝ 04-053-0026-0006/ Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց թույլտվության ինքնակամ կառուցված կառույցները՝ ջերմոցը, քարե շինությունը և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասի վրա առկա ինքնակամ այլ կառույցներ:

3. Քանդել /ապամոնտաժել/ Վաղարշապատ համայնքի Ծիածան գյուղի թիվ 5-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հողամասին կից /կադաստրային ծածկագիր՝ 04-053-0026-0006/ Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց թույլտվության կառուցված ջերմոցը, քարե շինությունը և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասի վրա առկա ինքնակամ այլ կառույցներ և ազատել հողամասը:

4. Նախազգուշացնել Ասատուր Խաչիկի Ավագյանին, որ սույն որոշմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով:

5. [illegible] հիմնարկին՝ աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների օժանդակությամբ իրականացնելու սույն որոշման 3-րդ կետով սահմանված քանդման /ապամոնտաժման/ աշխատանքները:

6. Առաջարկել ՀՀ ոստիկանության ՀՈԳՎ Վաղարշապատի բաժնի պետին՝ սույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատի համայնքապետարանի կողմից քանդման /ապամոնտաժման/ աշխատանքները կատարելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ Միեր Մկրտչյանը:

8. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

9. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

Recoverable Signature

X

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 881-Ա

15 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

## «ԷՋՄԻԱԾՆԻ ԿԵՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 02/26 վարչական գործը՝ հարկային պարտավորությունների ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, «էջմիածնի կերերի գործարան» ԲԲԸ-ն /հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոց փող., թիվ 83 տուն, պետ.ռեգիստրի գրանցման համար 38.130.00750/1996-03-27, ՀՎՀՀ 04700145/ հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգից /VXSOFT ծրագիր/ ստացված տեղեկանքների և Վաղարշապատի համայնքապետարանի 15.05.2026 թվականի թիվ 2435 գրության հիման վրա, 2026 թվականի մայիսի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

«Էջմիածնի կերերի գործարան» ԲԲԸ-ին ուղարկվել է ծանուցում /հիմք 15.05.2026թ. թիվ 2435 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջիններիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները, ծանուցումը նաև հրապարակվել է ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Էջմիածնի կերերի գործարան» ԲԲԸ-ին ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, առաջարկ չի ներկայացվել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում գտնվող 04-002-0485-0011 կադաստրային ծածկագրով հողամաս և 04-002-0485-0011-004 կադաստրային ծածկագրով շինությունը հանդիսանում են «Էջմիածնի կերերի գործարան» ԲԲԸ-ի սեփականությունը և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով «Էջմիածնի կերերի գործարան» ԲԲԸ-ն չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝ Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի հարկի գծով /3.0 հա մակերեսով հողամաս և շինության/ **1 155 676 /մեկ միլիոն հարյուր հիսունհինգ հազար**

**վեց հարյուր յոթանասունվեց/ ՀՀ դրամ** հարկային պարտավորություն, որից 814 575 /ութ հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ 2024-2025թթ. ապառքի գումար և 341 101 /երեք հարյուր քառասունմեկ հազար հարյուր մեկ/ ՀՀ դրամ 2022-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ Օրենսգիրք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝ տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝ անշարժ գույքի հարկը և փոխադրամիջոցների գույքահարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք…

Օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հաշվառող մարմիններ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք՝ իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները) անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում հետևյալ ժամկետներում՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները՝ ֆիզիկական անձինք՝ մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, ազմակերպությունները՝ յուրաքանչյուր հաշվետու կիսամյակ՝ առաջին կիսամյակում մինչև հարկային տարվա հունիսի 1-ը ներառյալ, երկրորդ կիսամյակում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 224-227-րդ, 236-րդ, 397-րդ, 400-րդ և 401-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. «Էջմիածնի կերերի գործարան» ԲԲԸ-ից հօգուտ Վաղարշապատ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր **1 155 676 /մեկ միլիոն հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր յոթանասունվեց/ ՀՀ դրամ** չվճարված հարկային պարտավորությունների գումար:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 882-Ա

**16 հունիսի 2026 թ.** **ք. Էջմիածին**

### ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԾՁԲ 26/4 | 1 | Ավտոկռունկի վարձակալության ծառայություն | 1500000 | «Լիանա Հակոբյան Մուշեղի» ԱՁ | 49750245 | Արմավիր, ք. Արմավիր, Հանրապետության 17 | 16.06.2026 թ. | Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում | 1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9.4 կետ (հրավերով սահմանված | - |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | րի հետ մեկտեղ) | | | | | | ուն» ԲԸ | ստորագրում պայմանագիրը) | |

1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 883Ա

16 հունիսի 2026 թ. — ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Շիրազի փողոցի թիվ 8 տան բնակիչ Արարատ Գրիգորի Այվազյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 04022021-04-0057 տրված՝ 04.02.2021թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 01.06.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022NQBPJ7U, 04022M6RXQ8F/.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի 13-րդ փողոցի թիվ 15 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 13-րդ փողոց, թիվ 15/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 13-րդ փողոց, թիվ 15 կիսակառույց:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГ...
ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VA...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 884Ա**

16 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Բաղրամյան փողոցի թիվ 7 տան բնակիչ Գրիգոր Աղասու Հովհաննիսյանի դիմումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 03.06.2026թ. հաստատված 4308 սեղանամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022NW8HTXS/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, Հ. Բաղրամյան փողոց, թիվ 7 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԽԻԱԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 885Ա

16 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 22 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 38Ա շենքի թիվ 24-րդ բնակարանի բնակիչ Հովհաննես Ազատի Միրզոյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 07052026-04-0134 տրված 07.05.2026թ., «Մովսեսկոշին» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0160/ կողմից 19.05.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022YGWNSWF, 04022GS68KJP/.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի 3-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 3-րդ փողոց թիվ 22 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 3-րդ փողոց թիվ 22/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԽՍԱԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 886Ա**

16 հունիսի 2026 թ. — ք. Էջմիածին

**ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 13.01.1993թ. ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 27.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսակովի փողոցի 3-րդ փակուղու թիվ 10 տան բնակիչ Արա Սարգսի Ազիզյանի դիմումը, Սվետլանա Հարությունի Մովսեսյանի մահվան, ամուսնության և ծննդյան վկայականները.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի13.01.1993թ. թիվ 1 արձանագրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ «Մովսիսյան Սվետլանա Հարությունի» բառերը փոփոխել « Մովսեսյան Սվետլանա Հարությունի » բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 887Ա

17 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

### ՍՎԵՏԼԱՆԱ ԱՂԱՍՈՒ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ալավերդյան փողոց, փակուղի 1, թիվ 7 Ա տան հասցեի բնակիչ՝ Աիդա Գեղամի Գրիգորյանի 04.06.2026թ. դիմումը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 16.06.2026թ. թիվ 8 նիստի թիվ 1 արձանագրությունը, ուսումնասիրություններն ու փաստերը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ալավերդյան փողոց, 1 փակուղի թիվ 7 Ա տան հասցեի բնակիչ՝ Սվետլանա Աղասու Գրիգորյանի /ծնված՝ 08.03.1945թ., անձնագիր՝ AL 0238907/ նկատմամբ սահմանել պատրոնաժ՝ պատրոն նշանակելով՝ Աիդա Գեղամի Գրիգորյանին /ծնված՝ 14.04.1969թ., անձնագիր՝ A0 0543460/:

2. Հսկողություն սահմանել Սվետլանա Աղասու Գրիգորյանի նկատմամբ պատրոն նշանակված Աիդա Գեղամի Գրիգորյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Աիդա Գեղամի Գրիգորյանին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 888Ա

17 հունիսի 2026թ. ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԼԵՎՈՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման, համայնքի ղեկավարի 06.05.2026թ. թիվ 659Ա որոշման և համայնքի ղեկավարի 26.05.2026թ. թիվ 2679 գրության առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Համլետ Սամվելի Պետրոսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Շահումյան գյուղի Լ.Նավասարդյան փողոցի թիվ 2/11 հասցեում գտնվող՝ ընդհանուր 293քմ /293քմ արտաքին և 273.2քմ ներքին/ մակերեսով արտադրական նշանակության կիսակառույց շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0293հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը:

Համլետ Սամվելի Պետրոսյանը 27.05.2026թ. տվել է իր գրավոր համաձայնությունը գնելու այն՝ ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գներով՝ 293քմ /293քմ արտաքին և 273.2քմ ներքին/ մակերեսով արտադրական նշանակության կիսակառույց շինությունները 708 474 / յոթ հարյուր ութ հազար չորս հարյուր յոթանասունչորս /ՀՀ դրամ և 0.0293հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 357 753 / երեք հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր հիսուներեք / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Համլետ Սամվելի Պետրոսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Շահումյան գյուղի Լ.Նավասարդյան փողոցի թիվ 2/11 հասցեում գտնվող՝ ընդհանուր 293քմ /293քմ արտաքին և 273.2քմ ներքին/ մակերեսով արտադրական նշանակության կիսակառույց շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0293հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնին Համլետ Սամվելի Պետրոսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТА
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY VAGHARSHAPAT
04463138

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 889Ա

17 հունիսի 2026թ. ք. Էջմիածին

## ԱՐՏԱԿ ԳՐԻՇԱՅԻ ԵՂՇԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտակ Գրիշայի Եղշատյանի լիազորված անձ Արամ Գագիկի Ավդալյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան սեփականության իրավունքով Արտակ Գրիշայի Եղշատյանին պատկանող /հիմք՝ 30.01.2025թ. տրված թիվ 30012025-04-0061 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 10.05.2025թ. կազմված հատակագիծ, / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Ոսկեհատ խճուղու թիվ 20/1 հասցեում գտնվող 04-002-0314-0002 կադաստրային ծածկագրով 0.9995հա մակերեսով հողամասի 0.663հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի պտղատու այգուց /կորիզավոր/ 0.1482հա մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման փոփոխելու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 21.05.2026թ. թիվ 119-Ա որոշումը և ՀՀ վարչապետի 22.12.2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 15.04.2026թ. տրված թիվ 1/փ-139 դրական եզրակացությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Ոսկեհատ խճուղու թիվ 20/1 հասցեում գտնվող 04-002-0314-0002 կադաստրային ծածկագրով 0.9995հա մակերեսով հողամասի 0.663հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի պտղատու այգուց /կորիզավոր/ 0.1482հա մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
2. Համաձայն տարածագնահատման գոտիականության հողամասը գտնվում է 12-րդ գոտում և կադաստրային արժեքը մեկ քառակուսի մետրի համար կազմում է 2887.5 /երկու հազար ութ հարյուր ութսունյոթ ամբողջ հինգ/ ՀՀ դրամ, փոփոխման պահին հողամասի կադաստրային արժեքների տարբերությունը մեկ քառակուսի մետրի համար 2476.5 /երկու հազար չորս հարյուր յոթանասունվեց ամբողջ հինգ/ ՀՀ դրամ է և 1482հա համար կազմում է 3 670 173 / երեք միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ, որը պետք է վճարել համայնքային բյուջե՝ 900325151166 հաշվեհամարին:
3. Հետագա կառուցապատումն իրականացնել ՀՀ քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԽԻԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 890Ա

17 հունիսի 2026թ. — ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 2/4 հասցեում գտնվող 7.22910հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանեցնել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշման, Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 որոշման պահանջներին և համարել փոփոխված հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, պատմական և մշակութային գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ